



Project funded by the
European Union
Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրամիության կողմից



ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՊԼԱՍՏԻԿ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՏ

Շրջակա միջավայրին և մարդու առողջությանը աղբի հասցրած վնասների մասին այսօր շատ է խոսվում, առկա են բազմաթիվ տեղեկատվական նյութեր և ուսումնասիրություններ: Աղբը կարող է տարածվել քամու, աղբաթափման վայր թափանցող կենդանիների միջոցով, մարդկանց և տնտեսավարող սուբյեկտների միջոցով: Չկառավարվող աղբը հղի է բացասական հետևանքներով. աղբավայրի մեծ հատվածներ մշտապես այրվում են:

Աղբահանությունը խնդիրը մարդկության առաջ ծառայել է դեռ շատ վաղուց: Տարբեր ժամանակաշրջաններում մարդիկ փորձել են լուծումներ առաջարկել աղբի կառավարման ուղղությամբ: Դրանք կուտակվելով՝ ընկել են ներկա համաշխարհային փորձի հիմքում:

- Դեռևս մ.թ. 3000 տարի առաջ Կրետե կղզում աղբը հեռացվում էր այդ նպատակով հատուկ փորված հորերում, իսկ այնուհետև՝ ծածկվում հողաշերտով:
- Մեզ հասած՝ աղբահանությանը վերաբերող առաջին օրենքը, որով սահմանվում էին աղբի հեռացման կանոնները, ընդունվել է մ.թ. 2500 տարի առաջ Աթենքի իշխանությունների կողմից. պոլիսի քաղաքացիները պարտավոր էին աղբը հեռացնել քաղաքից առնվազն 1.5 կմ այն կողմ:
- 11-րդ դարում Ճապոնիայում կատարվեց աղբի վերամշակման առաջին փորձը. հավաքվում էին հին թուղթը և վերամշակելով՝ ստանում նորը:
- 14-րդ դարում Անգլիայում և Ֆրանսիայում սահմանվեցին տուգանքներ քաղաքի փողոցների աղտոտման համար:
- Անգլիայում և Գերմանիայի շատ քաղաքներում արգելվեց ջրային ավազանների մերձակայքում աղբի նետումը:
- 16-րդ դարում Անգլիայի թագուհին հատուկ հարկային արտոնություններ շնորհեց աղբի հավաքման և տեղակայման համար:

- 18-րդ դարում ԱՄՆ անկախության պատերազմի ժամանակ վերածովման ենթակա մետաղական թափոնների հավաքումն ու պահեստավորումը յուրաքանչյուրի հայրենասիրական պարտքն էր համարվում, քանի որ զգացվում էր զինամթերքի համար անհրաժեշտ հումքի պակաս:
- 19-րդ դարում, երբ մեծ թափով զարգացավ ուրբանիզացիան, աղբի ծավալները զգալիորեն աճեցին, ինչը ստիպեց քաղաքային իշխանություններին ստեղծել համայնքային առաջին աղբահանության ծառայությունները:
- Բրիտանական խորհրդարանը օրենք ընդունեց աղբի պահեստավորման և վերամշակման վերաբերյալ: Նոթինհեմում սկիզբ դրվեց աղբից էիներգիայի ստացման պրակտիկային:
- Նյու-Յորքում բնակիչների առջև դրվեց աղբի (սննդի, թղթի, մետաղի) տեսակավորման պարտավորություն: Դրանք նետվում էին փողոցում տեղադրված հատուկ աղբարկերի մեջ: Քաղաքում կառուցվեց աղբի վերամշակման առաջին գործարանը:



ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Հայաստանում այսօր կենցաղային թափոնների համափարփակ կառավարում չի իրականացվում. քաղաքային համայնքներում կատարվում է գուտ աղբի հեռացում, իսկ գյուղական գրեթե բոլոր համայնքներում, բացառությամբ մի քանիսի, աղբահանություն չի իրականացվում:

Այնպիսի ռեսուրսներով և մեթոդներով, ինչպես նաև մտածելակերպով, որ ներկայումս իրականացվում է աղբահանությունը Հայաստանում, հնարավոր չէ նվազեցնել դրա բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա:

Հայաստանում աղբահանության եկամուտները գրեթե բոլոր համայնքներում չեն ծածկում կատարված ծախսերը: Ծախսերը հիմնականում ծածկվում են համայնքի բյուջեի հաշվին:

Աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման համար սահմանված վճարները հիմնված չեն տնտեսական հաշվարկի վրա՝ պայմանավորված սոցիալական (բնակչության անվճարունակություն) և քաղաքական (ընտրություններ) դրդապատճառներով:

ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Հայաստանում գոյություն չունեն սանիտարական նվազագույն նորմերին համապատասխանող աղբավայրեր: Կա միայն մեկ արտոնագրված աղբավայր: Աղբավայրի օրինակելի սխեման՝ նվազագույն ստանդարտներով, մշակված է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: Սակայն համայնքները բավարար միջոցներ չունեն նմանատիպ աղբավայր կառուցելու համար:

Եթե քաղաքային բնակավայրերում գոնե առկա է հողահատկացում աղբի տեղակայման համար, ապա գյուղական համայնքներում աղբը տեղակայվում է տարերայնորեն ձևավորված աղբանոցներում, որոնք չեն կառավարվում համայնքի կողմից.



- ճանապարհները հիմնականում անբարեկարգ են, ինչը, հատկապես ձմռանը, զգալի դժվարացնում է աղբատար մեքենայի շահագործումը:
- մեծ մասում տեղանքի ուսումնասիրություն չի կատարվել՝ ստորերկրյա ջրերի առկայության մասին եզրակացության հանգելու նպատակով: Շատ համայնքներում տարվա հատկապես գարնանային ժամանակաշրջանում ստորերկրյա ջրերը անմիջական կոնտակտի մեջ են մտնում աղբի հետ՝ դրանից բխող բավականին լուրջ հետևանքներով:

կապես գարնանային ժամանակաշրջանում ստորերկրյա ջրերը անմիջական կոնտակտի մեջ են մտնում աղբի հետ՝ դրանից բխող բավականին լուրջ հետևանքներով:

- աղբանոցները չունեն պաշտպանական որևէ կառուցվածք՝ ցանկապատ, ապահովված չեն արտաքին ջրերի մուտքից, հիմքերը ծածկված չեն հիդրոմեկուսիչ շերտով՝ կանխելու համար ջրի թափանցելիությունը, չեն իրականացվում բնապահպանական և սանիտարա-համաճարակային միջոցառումներ:
- ցանկապատ չլինելու պատճառով, աղբանոցի ամբողջ շրջակայքով տարածվում են թղթի մնացորդներ և պոլիէթիլենային տոպրակներ, ազատ է մարդկանց ու կենդանիների մուտքը:
- տեղի է ունենում աղբի ինքնայրում, որից առաջացած մեթանի և դիօքսիհի արտանետումները ուղղվում են շրջակա միջավայր:
- չկա մեքենաների վլացման կետ, արտաքին ջրերից պաշտպանող կառույց, դրենաժային և զազահեռացման համակարգեր, չի կատարվում թորանների ուսումնասիրություն և մոնիտորինգ,
- չեն կատարվում հաշվարկներ աղբավայրերի տարողության և շահագործման ժամկետների որոշման համար:
- չի կատարվում աղբավայր տեղափոխվող թափոնների հաշվառում,
- չի կատարվում աղբի ամենօրյա հարթեցում և խտացում:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ


Գոյություն ունեցող օրենսդրությունը չի ապահովում աղբահանության համապարփակ կառավարումը՝ ներառյալ աղբի տեսակավորումն ու վերամշակումը: Լուծելով միայն վարձավճարի գանձման խնդիրը՝ չի շեշտադրում, որ դա պետք է վճարվի մատուցված ծառայության դիմաց, բնակչի հետ պայմանագրի հիման վրա, այլ ենթադրվում է, որ վճարը պետք է կատարվի զուտ աղբ արտադրելու փաստով:

Աղբի հավաքման, հեռացման և վճարների հավաքագրման գործընթացում գործնականում բացակայում է նաև համայնքների ներքին օրենսդրությունը կանոնակարգերն ու համապատասխան որոշումները:

ԱՂԲԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Աղբահանության ոլորտում վերոնշյալ բազում խնդիրները հաղթահարելու համար համայնքները պետք է որդեգրեն ռազմավարական մոտեցում: Յուրաքանչյուր համայնք պետք է ուսումնասիրի և վերլուծի համայնքում աղբահանության իրավիճակը՝ փորձելով հասկանալ, թե «որտեղ է այն գտնվում այժմ», վերլուծել իր թույլ և ուժեղ կողմերը: Համայնքը պետք է սահմանի աղբահանության հետ կապված իր տեսլականը և երկարաժամկետ նպատակները, թե «որտեղ է այն ուզում լինել» որոշակի ժամանակահատված անց:

Կոշտ կենցաղային թափոնների կառավարմանն ուղղված ռազմավարական մոտեցումը ենթադրում է որոշակի հիերարխիա, որը սխեմատիկ ներկայացված է ստորև.



Թափոնների հիերարխիան ունի գլխավայր շրջված բուրգի տեսք: Այն բաղկացած է երեք հատվածից, որոնցից յուրաքանչյուրը բնորոշում է որոշակի առանձին վարքագիծ:

Ամենացանկալի վարքագիծը աղբի ծավալի կրճատման վարքագիծն է: Դա ենթադրվում է, որ դեռևս աղբյուրի մոտ, մինչև նետելը, պետք է մտածել պոտենցիալ աղբի վերօգտագործման հնարավորությունների, աղբի տեսակավորման մասին:

Հիերարխիայի հաջորդ, ավելի ցածր մակարդակում ենթադրվում է արդեն տեղակայված կենցաղային թափոնների վերականգնում և վերադարձ տնտեսություն՝ աղբի վերամշակման կամ էիներգիա ստանալու միջոցով:

Հիերարխիայի ամենաստորին մակարդակում դրսևորվում է ամենաքիչ խրախուսվող վարքագիծը՝ աղբի հեռացում աղբավայր կամ այրում:



Աղբարտադրողների ցանկություններն ուղղիղ համեմատական են այս կամ այն վարքագծի դրսևոման հետ: Օրինակ՝ որքան մեծ է ցանկությունը, այնքան մեծ է հավանականությունը, որ աղբարտադրողը կդրսևորի թափոնների հիերարխիայում ամենաբարձր մակարդակով նախատեսված վարքագիծ և հակառակը:

ԱՂԲԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղբահանության արդյունավետ և համափարփակ կառավարումը ենթադրում է աղբի տեսակավորում և վերամշակում:

Ժամանակակից աշխարհում կենցաղային աղբի բաղադրությունը փոփոխության է ենթակվել: Շրջակա միջավայրի աղտոտվածությունը ավելացել և աղբի ծավալները մեծացել են կենցաղում պլաստիկի և պոլիէթիլենային թաղանթների կիրառմամբ: 1970-ականներից ԱՄՆ-ում սկսվում է պլաստիկ շշերի լայն կիրառումը կենցաղում:

Հատկապես պլաստիկ շշերի (Պոլիէթիլեն տերեֆտալատ/PET)՝ օգտագործումն անհրաժեշտություն է տնտեսության մեջ, քանի որ դրանք, ինչպես ասում են, գեղեցիկ են ինչպես բյուրեղը, թեթև՝ ինչպես օճառի փուչիկը, չեն կոտրվում և ամուր են պողպատի նման: Պլաստիկ շշերը ենթակա են հարյուր տոկոս վերամշակման:

Իր տնտեսական առավելություններով հանդերձ՝ պլաստիկ շշերը լուրջ վնասակար ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա, երբ այն չի վերամշակվում, այլ նետվում է շրջակա միջավայր: Տարբեր

տվյալներով տարեկան 63 միլիարդ պլաստիկ շշեր են նետվում աղբավայրեր կամ օվկիանոս: Տարեկան 2.5 միլիոն տոննա դիօքսին արտադրվում է պլաստիկ շշեր արտադրող ձեռնարկությունների կողմից: Այս ամենը նպաստում է կլիմայի փոփոխության և գլոբալ տաքացմանը:

Պլաստիկ աղբը բնության մեջ կենսաբանական քայքայման չեն ենթարկվում, սակայն ենթարկվում են լուսային քայքայման, որը նշանակում է, որ այն ժամանակի ընթացքում մասնատվում են մանր մասնիկների, որոնք կլանում են օրգանական աղտոտիչներ (բիսֆենոլ



Ա-ն (BPA) և պոլիքլորացված բիֆենիլը (PCB), որոնք աղտոտելով ջուրը, հողը՝ հիվանդացնում են կենդանիներին և թռչուններին, նրանց միջոցով թափանցում սննդի շղթա և վնասում մարդու առողջությանը՝ առաջացնելով անպտղություն, քաղցկեղ և այլ վնասակար ազդեցություններ իմունային, վերարտադրողական և նյարդային համակարգերի վրա:

Հետևաբար, նշված վտանգները նվազեցնելու համար պլաստիկի վերամշակումը դառնում է անհրաժեշտություն: Ինչպես նշվեց այն ձեռնատու է նաև տնտեսական նկատառումներից ելնելով: Այսօր ընդհանուր աղբից պլաստիկի 28%-ը առանձնացվում է ԱՄՆ-ում, 78%-ը Ճապոնիայում և 98%-ը Գերմանիայում:

Հայաստանում, տարբեր մեծության և կենցաղավարման վեց փորձնական համայնքներում կատարվել են աղբի բաղադրության վերաբերյալ ուսումնասիրություններ, որոնց արդյունքները ցույց են տվել, որ ընդհանուր աղբի մեջ պլաստիկ շշերի մասնաբաժինը (ծավալային առումով) մոտ 30% է:

Հայաստանում աղբի տեսակավորում դեռևս իրականացվում է հաշված համայնքներում: Ընդ որում՝ տեսակավորումը տարբեր համայնքներում տարբեր եղանակներով է տեղի ունենում: Օրինակ՝ Վեդու և 15

գյուղական համայնքների աղբահանությունն կատարվում է հիմնականում աղբավայր տեղափոխվող կամ արդեն տեղակայված խառը աղբից: «Ուրբան հիմնադրամի» կողմից Ավավերդիում, Վանաձորում, Հրազդանում, Սևանում, Ախուրյանում, Սիսիանում և Կապանում իրականացրած/իրականացվող աղբի տեսակավորման ծրագրերում աղբը տեսակավորվում է աղբյուրի մոտ, աղբարտադրողների օգնությամբ:

Հայաստանում արդեն սկսվել է նորարարական և տարածաշրջանում նմանօրինակ չունեցող են աղբի վերամշակման առաջին փորձերը: Կապան քաղաքում հիմնվելու է պլաստիկ թափոններից շինանյութերի ստացման արտադրամաս, որի համար որպես հումք կծառայեն աղբից տարանջատված պլաստիկ թափոնները: Ընթանում են նաև լաբորատոր աշխատանքներ բույսերի մշակումից թաղանթներ ստանալու ուղղությամբ, որոնք կենցաղում կարող են փոխարինել պոլիէթիլենա թաղանթներին:

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հանրության հետ աշխատանքը առանցքային նշանակություն ունի պատշաճ աղբահանություն իրականացնելու համար: Հանրությունը հաճախ տարբեր ընկալումներ ունի այս կամ այն խնդրի, դրաց կարևորության, լուծման ճանապարհների, այդ խնդրի լուծման համար պատասխանատուների ցանկությունների և կարողությունների վերաբերյալ: Ընկալումները կարող են լինել տեղին՝ հիմնված անցյալի փորձի վրա և թյուր, որը գալիս է անիրազեկությունից և գիտելիքի պակասից:

Նույնը կարելի է ասել աղբահանության ոլորտի մասին: ՏԻՄ-երը պատասխանատու են բնակչության իրազեկությունը և կրթությունը ապահովելու համար:

Աղբահանության վերաբերյալ բնակչության ընկալումները հասկանալու արդյունավետ մեթոդներից է հանրային կարծիքի ուսումնասիրությունը, որը թույլ են տալիս ոչ միայն հասկանալ բնակչության ընկալումները, այլ նաև ստեղծել այդ ընկալումները կառավարելու և ճիշտ ուղղորդելու գործիքակազմ՝ ներառյալ:

Տեսաձայնային միջոցների օգտագործում իրազեկման և կրթման համար

- Սոցիալական գովազդներ. կարճ տևողության այս տեսահոլովակները, հստակ ուղերձով, որը կարող է զգալի փոփոխություն մտցնել բնակչության վարքագծում և մտածելակերպում:
- Հեռուստա/ռադիո հաղորդումներ/քննարկումները շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ոլորտի վերաբերյալ տարբեր կարծիքները հանրությանը փոխանցելու համար
- Ցուցանակները և պաստառները՝ պատկերային կամ բառային հակիրճ նպատակային ուղերձներով, նպաստում են մարդկանց վարքագծի ու մտածելակերպի փոփոխությանը:

Կրթական միջոցառումներ

Դասընթացներ, սեմինարներ տարբեր լսարանների՝ հատկապես դպրոցականների, երիտասարդների համար աղբի արդյունավետ կառավարման, շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա աղբի վնասակար ազդեցության վերաբերյալ, Գիտելիքի մրցույթներ, տեղեկատվական բուկլետներ և պաստառներ:

Համայնքի մոբիլիզացման միջոցառումներ

Համայնքային քննարկումները, հանդիպումները աղբահանության տարբեր խնդիրների վերաբերյալ կարևոր են բնակչությանն իրազեկելու համար և փորձելու նրանց դարձնել ավելի շուտ դաշնակից, քան ընդդիմախոս: Այս հանդիպումներին նպատակահարմար է հրավիրել համայնքային ակտիվ խմբերին, երիտասարդներին, տարեցների, կանանց, ՀԿ-ներին և շագագրգիռ այլ անձանց: Համայնքի մոբիլիզացման միջոցառումների օրինակներ են շաբաթօրյակները, բնապահպանական թեմաներով երթերը և նկարչական մրցույթները, որոնք կրթական նշանակություն, ազդում են մարդկանց վարքագծի վրա և համախմբում են համայնքի բնակչությանը ընդհանուր խնդրի համատեղ լուծման շուրջ:

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Աղբահանությունը համայնքային ծառայության այն ոլորտն է, որը նպաստավոր է հանրային-մասնավոր համագործակցության համար: Ո՞րն է մասնավոր հատվածի ներգրավման առավելությունը: Ինչքանով են ներգրավված մասնավոր ընկերությունները համայնքներում աղբահանության ոլորտում: Ի՞նչ դժվարություններ կան այսօր աղբահանության ոլորտում հանրային-մասնավոր համագործակցության համար: Որո՞նք են այն նվազագույն պայմանները, որ աղբահանության իրականացումը համայնքներում ավելի գրավիչ կդարձնեին մասնավոր հատվածի համար:

Հանրային-մասնավոր համագործակցության նպատակը, հանրային ենթակառուցվածքների կամ հանրային ծառայությունների ապահովումն է մասնավոր հատվածի միջոցով:

Առավելությունները

- Մասնավոր հատվածը ծառայությունները մատուցում է ավելի արդյունավետ, ավելի որակով և ավելի ցածր գնով:
- Հանրային-մասնավոր համագործակցությունը հնարավոր է դրածնում մասնավոր հատվածի ֆինանսական, տեխնիկական և մասնագիտական ներդրումները հանրային ոլորտում:
- Կարևոր հանգամանք է, որ հանրայինը պետք է պահպանի սեփականության իրավունքը ենթակառուցվածքի նկատմամբ:


Դժվարությունները

Աղբահանության կառավարումը համայնքներում չի գրավում մասնավոր հատվածի հետաքրքրությունը հետևյալ պատճառներով.

- Բնակչության ցածր խտություն. համայնքների բնակչությունը փոքրաթիվ են, ուստի ստացած եկամուտները չեն ծածկում ծախսերը, առավելևս չեն կարող ապահովել շահույթ: Մասնավորին շահեկան է ներդրումներ անել ավելի մեծ բնակչություն ունեցող համայնքներում կամ համայնքների խմբում/խմբերում:

- Կարճաժամկետ պայմանագրեր. Պայմանագրի ժամկետները մասնավոր ընկերությունների հետ չափազանց կարճ են, համայնքների մեծ մասում 1 տարուց ոչ ավելի, որը չի առաջացնում մասնավորի հետաքրքրությունը:
- Չհիմնավորված սակագներ. Սակագնի՝ տնտեսապես հիմնավորված հաշվարկը բացակայում է: Սակագները հիմնականում սահմանվում են քաղաքական և սոցիալական նկատառումներից ելնելով: Դրանք զգալիորեն ցածր են այն ծախսից, որը կատարվում է աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման համար, ուստի զգալի ռիսկ է պարունակում մասնավորի համար:
- Բնակչության տեղաշարժ և սոցիալական վիճակ: Այսօր, մասնավոր հատվածը նախընտրում է ընդհանրապես չառնչվել բնակչության հետ վարձավճարների հավաքագրման մասով, ոչ միայն բնակչության կողմից վճարելու պատրաստակամության բացակայության ռիսկի, այլև բնակչության հոսունության պատճառով, բնակչության թվի անընդհատ տատանման պայմաններում: Ուստի ներկայումս մասնավոր հատվածին ձեռնտու է, որ համայնքը կրի վարձավճարների հավաքագրման ռիսկը:

Ներկայացնենք հանրային-մասնավոր համագործակցության երկու մոդել, որոնցից մեկը հիմնված է համայնքային բյուջեից ներդրումների դիմաց կանոնավոր վճարումների կատարելու վրա (կառավարման պայմանագիր), իսկ մյուսը՝ ենթակառուցվածքի վարձակալության վրա (վարձակալության պայմանագիր)՝ ապահովելով կանոնավոր վճարումներ մասնավորի կողմից համայնքային բյուջե:



ՄԱՍՆԱՎՈՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հանրային-մասնավոր համագործակցությունը պետք է հիմնված լինի փոխադրյալ շահագրգռվածության և ռիսկերի բաժանման վրա:


ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Այսպիսով՝ աղբահանությունը համայնքային այնպիսի ենթակառուցվածք է, որի վիճակից ուղղակի կամ աննուղղակի կախված է շրջակա միջավայրի պաշտպանությունը, մարդկանց առողջությունը, կյանքի որակը, վարքագծի փոփոխությունը և տնտեսական աճը խթանումը, այսինքն՝ աղբահանության կառավարումը պահանջում է համապարփակ, ինտեգրացված մոտեցում:



Մաքուր է ոչ այնտեղ, որտեղ մաքրում են, այլ այնտեղ որտեղ չեն աղտոտում:

Բոլորս պարտավոր ենք հոգ տանել մեր հայրենի բնության, մեր համայնքի, մեր ընտանիքի և երեխայի մասին, և այդ դեպքում առկա մարտահրավերները կդառնան հնարավորություններ:



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ուրբան հիմնադրամը,
և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: